

# Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի պարզաբանումները

## «Քաղաքացիական ծառայություն» թերթին

### Նոր խաղի կանոններ՝ գիտության բնագավառում

ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում ստեղծվել է մի նոր կառույց՝ գիտության պետական կոմիտե: Պետք է ասել, որ նման կառույցի ստեղծման անհրաժեշտությունը մեր իրականության մեջ վաղուց էր հասունացել, քանի որ հետխորհրդային տարիներին, միջոցների անվավարարության պատճառով, հայրենի գիտությունը պատշաճ ուշադրություն չէր վայելում: Գիտության ոլորտում ֆինանսավորման խնդիրները լուծվում էին «ով է ավելի ճարպիկ» սկզբունքով: Արդյունքում՝ հաճախ առանց այդ էլ սուղ ֆինանսական միջոցները հոսում էին ոչ այնտեղ, որտեղ դրանք ավելի անհրաժեշտ էին և կարող էին առավել արդյունավետ լինել:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանը** կոմիտեի ստեղծման հիմնական նպատակներից թերևս առաջինը համարում է գիտության զարգացմանն ուղղված մեկ ընդհանուր քաղաքականության մշակումը: Նրա խոսքով՝ Հայաստանի անկախացումից հետո գիտությունը հայտնվել էր կողպասի մեջ: Դրությունը փրկելու տարբերակ էր ընտրվել թեմատիկ ֆինանսավորումը, երբ ֆինանսավորվում էր կոնկրետ աշխատանքային խումբ՝ կոնկրետ ծրագիր իրականացնելու համար:

«Անկումը տևեց մինչև 1996 թվականը: 1996-2000 թվականներին այդ անկման կայունացման շրջանն էր, երբ փորձում էինք գոնե մնալ այդ «փոստում», որում հայտնվել էինք: 2000-ից հետո, երբ ինչ-որ չափով սկսեց արդյունավերությունն աշխատել, զարգացման միտումներ նկատվեցին, գիտության մեջ լուրջ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն առաջացավ, «փոսից» դուրս գալու ուղիներ նշնարվեցին: Այս նոր ստեղծված կառույցի խնդիրներից մեկը գիտության զարգացման նոր խաղի կանոնները հայտարարելն է», -ասաց Կոմիտեի նախագահը:

Կոմիտեի առաջնահերթ խնդիրը առաջիկա հինգ տարիների համար գիտության բարեփոխումների ռազմավարական ծրագրի մշակումն է: Փոփոխություններ կկատարվեն «Գիտության մասին» ՀՀ օրենքում, կվերանայվի ՀՀ ազգային ակադեմիայի կանոնադրությունը, կհստակեցվեն գիտության զարգացման համար խիստ կարևոր այդ կառույցի գործառնությունները, ճյուղային ինստիտուտների կարգավիճակը:

«Ճյուղային ինստիտուտները հիմնարկներ են, որոնք սպասարկում են տվյալ ճյուղին, կատարում արտադրության տվյալ ճյուղի պատվերները, -ասում է Սամվել Հարությունյանը: -Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ճյուղային ինստիտուտները ոչ մի պատվեր էլ չեն ստանում: Այսինքն՝ դրանք ոչնչով չեն տարբերվում ակադեմիական ինստիտուտներից, որոնց ֆինանսավորում է պետությունը: Ստացած գումարը նրանք պարտավոր են փոխհատուցել գիտական արտադրանքով»:

Ըստ Կոմիտեի նախագահի՝ բավական վատ վիճակում է գիտական արդյունքների ապրանքայնացման հարցը: Աշխարհում ընդունված կարգ է. գիտության ֆինանսավորման մեջ մեծ ներդրում ունեն արդյունավերական ձեռնարկությունները, ֆիրմաները: Մինչդեռ Հայաստանում գիտությունը ֆինանսավորվում է միայն պետության կողմից, իսկ այդ ներդրումներն էլ չեն փոխհատուցվում: Ստեղծված իրավիճակը մի քանի գործոններով է պայմանավորված: Նախ, արդյունավերության զարգացման առումով բազում խնդիրներ կան: Գիտական արդյունքների պատենտավորումը նույնպես հաճախ խնդիրների հետ է կապված, հստակ ձևակերպված չեն հեղինակային իրավունքի վերաբերյալ մոտեցումները: Այս ամենը հանգեցրել են նրան, որ մեզ մոտ գիտության ապրանքայնացում գրեթե չի կատարվում: Եթե կատարվում էլ է, ապա՝ շրջանցելով պետության շահը: Գիտական արդյունքի հեղինակը առանց խոչընդոտի կարողանում է այն երկրից դուրս հանել: Մրանք բոլորը խնդիրներ են, որոնք գտնվելու են Գիտության պետական կոմիտեի ուշադրության կենտրոնում:

Կոմիտեն զբաղվելու է նաև միջազգային գիտակրթական հարաբերությունների հաստատումով: Գիտության ասպարեզում համագործակցելու վերաբերյալ պայմանագիր է ստորագրվել ՌԳ՝ գիտության և կրթության նախարարի հետ: Առաջիկայում նման պայմանագրեր կկնքվեն Բելառուսի, Լեհաստանի, Մերձբալթյան հանրապետությունների հետ: Համագործակցության

վերաբերյալ պայմանավորվածություն կա Հայաստանում Ղազախստանի դեսպանության աշխատակիցների հետ: Այդ պայմանագրերին հետևելու են համատեղ իրականացվող ծրագրեր՝ հիմնականում մանուտեխնոլոգիաների, սուպերտեխնոլոգիաների,

կենսատեխնոլոգիաների, մեքենաշինության և մի շարք հումանիտար գիտությունների ասպարեզներում:

Ինչ վերաբերում է գիտական ծրագրերի թեմատիկ ֆինանսավորմանը, Կոմիտեի նախագահը հավաստիացնում է, որ այն հիմնարար փոփոխությունների է ենթարկվելու, որոնցում են աշխարհում ընդունված մոտեցումները, որոնց հիմքում ընկած են լինելու դրամաշնորհները: Գրամաշնորհի արժանացող ծրագրերը պետք է նպատակաուղղված լինեն գիտության, ինչպես նաև տնտեսության այս կամ այն ոլորտի, պետության կողմից գերակա համարվող ուղղությունների զարգացմանը, որպեսզի ֆինանսական միջոցներն անտեղի չվատնվեն, այլ ուղղվեն ռազմավարական խնդիրների լուծմանը: Միաժամանակ՝ չեն անտեսվի նաև հիմնարար գիտությունների զարգացմանն ուղղված հետազոտությունները, ազատ ստեղծագործական ծրագրերը, որոնց արդյունքներն ի հայտ կարող են գալ ոչ անմիջապես, այլ տարիներ անց: Արդյունքում՝ կձևավորվի ֆինանսավորման այնպիսի համակարգ, երբ պետական միջոցները կտրվեն ոչ թե ինստիտուտներին՝ նրանց պահպանման ծախսերը հոգալու համար, այլ կոնկրետ գիտական ծրագրերին, դրանց իրականացման նպատակով ստեղծված գիտական հիմնարկներին, որոնք իրատեսական ծրագրեր կառաջարկեն և կիրականացնեն:

Եվս մեկ կարևոր խնդիր ունի լուծելու նորաստեղծ այս կառույցը՝ գիտության երիտասարդացման խնդիրը: Գաղտնիք չէ, որ մեր երկրում հատկապես հետխորհրդային տարիներին գիտությունը գրեթե չի հրապուրում երիտասարդությանը: Կոմիտեն իր առջև խնդիր է դրել մշակել երիտասարդությանը գիտության հետ կապելու որոշակի քաղաքականություն: Կստեղծվի գիտությանն աջակցող հիմնադրամ, որը դրամաշնորհներ կտրամադրի երիտասարդ գիտնականներին, նրանց համար հատուկ մրցույթներ կհայտարարվեն և այլն:

Վստահաբար կարելի է ասել, որ նորաստեղծ գիտական կառույցի դերը չափազանց մեծ, իսկ անելիքները շատ են լինելու, քանի որ մեր երկրի համար գիտելիքի վրա հիմնված տնտեսության զարգացումը առաջնահերթ խնդիր է:

*«Զաղաքացիական ծառայություն», 26 մարտի, չորեքշաբթի, 2008*

*Անուշ Սամվելյան*

